

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 150 դր
» Գաւառաց » 160 »
» Օտար երկիրներու » 180 »
Վեցամսեայ Կ. Պոլսոյ » 75 »
» Գաւառաց » 80 »
Իւրաքանչիւր թերթի գին 60 փր.
Ծանուցման տողը մէկ անգամի հա-
մար 2 դուրուշ, երկու անգամի հա-
մար 60 փարայ, աւելի անգամներ
բաւ համար 40 փարայ:



Լ Ր Ա Պ Ի Ր

ՔՐԻՍՏՈՍԻԱՆ ԱՂԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 16 ԴԵՏԵՄԵՐ

ՔՐԻՍՏՈՍԻԱՆ

Եթէ ստոյգ է որ փարիզ տա-
կաւին երեք ամսուան պարէն ունի
եւ կրնայ դիմանալ պատերազմին՝ քիչ
ժամանակէն վերջանալն անյուստի է:
Գաւառներն անգուշ անդադար պատ-
րաստութիւնները կը շարունակեն, եւ
եկամ լուրսուն չափազանցութիւննե-
րը վար երթալով մինչեւ երկու ամիս
մէկ միլիոնէն աւելի զօրք պատերազ-
մի հանելու տարակոյս չմնար: Արդէն
տասն բանակաւորի կազմած են, որոց
վերջ 50-60 հազարական եւ չորսը 200
հազարական զօրք կրնան պարունակել:
Անգղիացի զինուորական պաշ-
տօնակալ մը, Պ. Օթլիֆի, որ Գաղղիոյ
եւ Բրուսելոյ զինուորական վիճակին
վրայ դիւր մը հրատարակած է, կը հա-
ւանդէ թէ Գաղղիա այս բանակե-
տաւորներէն չնորհիւ կրնայ փետրվարի
մէկ երկու միլիոն ու կէս զօրքով յար-
ձակողական սկսիլ: Այնքէ, կրնայ, Լօարի
բանակը չկրնայ փարիզի պաշարուն
աւելի, եւ փարիզ կարենայ մինչեւ
փետր. 15 դիմանալ պատերազմին
վախճանը վերջութեան յոյս չթողուր
Բրուսելոյ: »

Արդէն Գերմանացիք ալ տագնապի
սկսած են Գաղղիացեաց այս երկար
ընդդիմութենէն եւ ապագան շատ
յուսակց չերեւիր իրենց: Զօրաց գուն-
դերը շատ ցանցաւոր են թէ՛ պատե-
րազմի մէջ եղած կորստներով եւ թէ՛
հիւանդութեամբը, եւ եթէ տակա-
ւին այսպէս երկու ամիս ալ շարու-
նակէ, վիճակին շատ պիտի դէնայ:
Ուստի անհամբերութեամբ պատերազ-
մին վերջանալուն կը փափաքեն Պ.
Պիամարք Մօլթըք եւ ընկերութիւն ա-
մեն ջանք եւ միջոց ի դուրս կը դնեն
զօրաց սիրտը հանդարտելու համար, եւ
այնպէս կը հաւատցնեն անոնց թէ
փարիզ քանի մ'օրէն անձնատուր ըլ-
լալու հարկին մէջ է. ապա թէ ոչ
մինչեւ հիմա շատոնց ումակած եւ
յարձակամբ առած էին, որոյ համար
անշուշտ շատ մարդ կորսնցնել հարկ
պիտի ըլլար, բայց հիմա առանց կո-
րուստի պիտի առնուն եւ կրած յոգ-
նութիւնն հոն հանգստութեամբ պի-
տի փոխարինեն:

Սակայն փարիզեաց յաճախ
դուրս յարձակումներն եւ ըրած շար-
քերը վերստին ալ խոստումներուն ազ-
դեցութիւնը կը ցրեն, եւ պաշարո-
ղաց դժգոհութիւնն ու տագնապը կա-
ւելցնեն:

Մի եւ նոյն տագնապն ու դժ-
գոհութիւնը կը տիրէ նաեւ Գերմա-
նիոյ մէջ, ուր երկրին բոլոր առողջ
զօրութիւնը Գաղղիա փոխադրուելով
մեծ մասը պատերազմներու մէջ կամ
հիւանդութեամբ մեռած, եւ մնաց-
եալներն ալ հոն արգիլուած կեցած

են, հետեւաբար հարիւր հազարնե-
րով ընտանիք եւ միլիոնաւոր ման-
կունք անօգնական եւ անապաւն յե-
տին ներքութեան մէջ ինկած են: Ար-
հեստներն ու առուտուրները դադ-
րած, երկիրներն անմասկ մնացած,
աղքատութիւնն ու խեղճութիւնն օր-
քան զօր կը ծաւալի, այս է Գերմա-
նիոյ ներկայ վիճակը: Եթէ Գաղղիոյ
երկիրներուն զրեթէ մէկ երրորդն ա-
ւելցնալ եւ անթիւ ընտանիք արեւն
ու միւսրի վրայ նստան, յաղթող Գեր-
մանոյ վիճակն ալ շատ վայելուն չէ:
մանաւանդ որ Գաղղիացիք աւելի հա-
րուստ ըլլալով մինչեւ հիմա կրցին
նիւթական զոհողութեանց դիմանա-
լով Գերմանացիք նոյն կարողութիւնը
չունին:

Անգղիական Թայմզ լրագիրը՝ որ
առաջ գաղղիացիները կը հեղհեղէր,
հիմա ակած է Գերմանացիները հեղ-
հել, որք ասկէջ երկու ամիս առաջ
յաղթական փառք հաշտութեան ըն-
քա յարմար առիթը կորսնցնելով, հի-
մա դժգոհիլ կ'սկսին:

Ահաւասիկ իր խօսքերը.

« Գաղղի վերամարտութիւնը դժ-
գոհութիւն կուտայ Գերմանիոյ, եւ
պատճառը դիւրաւ կը հասկցուի:

« Փարիզ որ շատոնց պէտք էր
անձնատուր ըլլար եթէ բնակիչները
քաղաքապարտական զգացմամբ վառ-
ուած ըլլային, կամ դուռէ քիչ մը յար-
դանք ունենային Բրուսիական պա-
տերազմին կանոնացնու սովորութեան-
ցը, փարիզ յամառ եւ անընկճելի կե-
րելի:

« Գերմանական Տիրուհի քաղա-
քին կողմէն իրաւամբ պատճառներ այս
չէր, եւ Գերմանիա իրաւունք ունի
դժգոհութեան զգացում մը տածել,
որ իր սրտէն դուրս կը յորդէ:
« Բայց թէ որ փարիզի վերամար-
տութիւնը Գերմանացեաց մէջ այսչափ
իրաւացի ցատում կը գրգռէ, համայն
Գաղղիոյ անհամարող եւ խիտ բռնա-
ւորութեան համար ի՞նչ բնութիւն է:

« Փարիզի թերեւս մօտ ժամանա-
կէն անկմանը կրնայ սպասուել բայց
երբոր փարիզ ինչայ շատ յայտնի է
որ երկիրն աննուաճ եւ աննուաճելի
պիտի մնայ:

« Խեղճ Գերմանացիք, որ կըրնա-
լին ասկէջ երկու ամիս առաջ յաղ-
թական փառք իրենց երկիրը դառ-
նալ, աներկմառ ըլլալով թէ ներկայ
սերունդին օրով յաճախուի կրկնի
չունին, եւ այն հիմաւոր յոսով թէ
մինչեւ որ նոր սերունդ մը այրական
հասակի եւ քաղաքական հզօր դրից
հասնի, Եւրոպիոյ մէջ տիրող աղքե-
ցութիւնները բոլորովին կը փոխուին
եւ խաղաղական կըլլան, խեղճ Գեր-
մանացիք Գաղղիա կեցան տեսնե-
լու համար թէ Եւրոպիոյ համակրու-
թիւնները՝ որք իրենց ընկերացած է-
ին երբոր իրենց սղաւտութիւնը կը

պաշտպանէին հետզհետէ անհետա-
նալու վրայ են, եւ թէ իրենց դէմայն-
պիսի դժուարութիւններ կը տնկուին,
որոց չտիրի կրնան առանց վտանգի
յաղթել, եւ որոց մէջէն պատիւ չի
պիտի կրնան քաղել: »

Այնքէ, « Զեյլինական Անկախու-
թիւն» լրագիրն ալ հետեւեալ ուշադրու-
թեան արժանի հատուածը կը հրատա-
րակէ.

« Եւրոպական քաղաքակրթու-
թիւնը, որ Տեւտոնեան քաղաքա-
կրթութիւնն ըլլալէ շատ հեռու է,
սրտէն կը զարնուի այս պատերազմին
մէջ եւ ամեն կողմէ միաձայն անէժք
կը բարձրանայ անոր թշուառական հե-
ղինակներուն դէմ:

« Այնտեղէն ի վեր դերերը փոխ-
ուած են. հիմա Բրուսիա միայն պա-
տասխանատու է թափուած բոլոր ար-
եան. իր թագաւորին եւ քաղաքա-
պետաց վրայ կը թափին զոհերուն ա-
նէճքներն եւ քննահանգ ախարհի
մեղադրանքը:

« Ամեն երկրի լրագիրը, քիչ բա-
ցառութեամբ, միաձայն կը դատա-
պարտեն իր յօսի եւ Պիամարքի ըն-
թացը, եւ դառնապէս կը կշտամ-
բեն « Գաղղիական զոհերուն անհեղ-
հանքը »:

« Անգղիոյ եւ ուրիշ չեզոք երկր-
ներու լրագիրներէն ետեւ, Բրուսիական
լրագիրներն ալ սոսկման աղաղակ կար-
ձակեն: « Որ չանցնիր, կրնայ Կոստա լը-
րագիրը, որ քառասուն լուրեր չիմա-
նանք: »

« Հոս գեղեր կրակով կը ջնջուին,
հոն գիւղացեաց խումբեր հրացանի կը
բռնուին, որովհետեւ կառավարու-
թեան հրաւիրովը դէնք ատեր են
իրենց տունը պաշտպանելու համար:
ուրիշ տեղ մ'ալ այնպիսի հանդանա-
կութեանց պահանջներ կըլլան, որով
ամբողջ Ժողովուրդներ յետին թշուա-
ռութեան մէջ կ'իյնան: Եւ այս ամենը
կըլլայ՝ փարիզը միակողմէրու նպատա-
կաւ Գերմանացեանքէ քաղաքակրթու-
թենէն ի թէ Եւրոպայ այս վայրագու-
թեանց անհոգ հանդիսատան կարե-
նայ ըլլալ: ուստի ալ համբերութիւնն
հասնիլ կ'սկսի:

« Անհնար է չհանել որ Բրուսիոյ
վրայ համակրութիւններն անհետացան
Եւրոպիոյ մէջէն: Նոյն խի Անգղիա
կ'սկսի զրուանալ աչքն անկէն դար-
ցունել այսչափ կոտորածոց տեսարա-
նէն, եւ ակամայաբար կը հարցնէ
թէ արդեօք այս աւերածոց վերջն
այն ժամանակ պիտի գայ՝ երբոր եր-
կաթն ու կրակը ոչ եւս ճարակ դառնան: »

Հեռագիրը ծանուցած էր թէ
Բրուսիացեաց սպայակոյտին գլուխ ան-
ուանի Մօլթըք զօրապետը թրջիւ զօ-
րապետին նամակ մը գրելով՝ Լօարի
բանակին յաղթութիւն իմացուցելու, եւ
առաջարկել էր որ եթէ կողմէր
կրնար մէկը զրկելով ստուգել թրջիւ

զօրապետն ալ պատասխան զրեք էր
թէ ստուգել հարկ չհամարիր:

Մօլթըք զօրապետն ասով իմա-
ցրնել կողմէր փարիզեաց թէ Լօարի բա-
նակէն իրենց օգնութեան յոյս չէր
մնացած, հետեւաբար՝ սղաւտու տեղը
դիմադրութիւն կընէին:

Ահաւասիկ երկու զօրապետաց նա-
մակներուն պատճենը:

Վերսայլ 5. դեկտ. 1870
« Զօրապետ.

« Օգտակար կրնայ ըլլալ իմացնել
Ձեր վսեմութեան թէ Լօարի բանակն
երէկ Օրլէանի մօտ յաղթուեցաւ եւ
այդ քաղաքն ալ նորէն Գերմանական
զօրաց ձեռքն անցաւ:

« Եթէ ձեր վսեմութիւնը պատ-
շաճ դատի իր մէկ պաշտօնակալին
միջոցաւ համադրուի այս ըստ ծիս, պատ-
րաստ եմ անցադիր տալ՝ երթալուն ու
դառնալուն համար:

« Ընդունելէք, զօրապետ իմ,
տարժ. յարգանքս հաւատարմի, ու-
րով պատիւ կը համարեմ ընձ ըլլալ ա-
մենախոնարհ եւ ամենահնազանդ ծա-
ռայ ձեր:

Գլխ. Սպայակոյտ
ԿՈՍՏՈՒՊՈԼԻՍ

Պարիզ 6 դեկտ.

« Զօրապետ.

« Ձեր վսեմութիւնը խորհրդէ թէ
« Կրնայ օգտակար ըլլալ իմացնել ինձ
« Եթէ Լօարի բանակն յաղթուած է
« Օրլէանի մօտ եւ այդ քաղաքն ալ
« վերստին Գերմանական զօրաց ձեռ-
« քնն անցած: »

« Պատիւ կը համարեմ ինձ իմացը-
նել ձեզ թէ այդ զեկուցումով ըս-
տացայ եւ պարտք չեմ համարիր Ձեր
վսեմութեան յոյս տուած միջոցներով
ստուգել:

« Ընդունելէք, զօրապետ իմ իմ
խորին յարգանքս հաւատարմի, որով
պատիւ կը համարեմ ինձ ըլլալ ամե-
նախոնարհ եւ ամենահնազանդ ծառայ
ձեր:

Կոստ. Սպայակոյտ
20 ՓԵՏՆ ԹՐՅՈՒՆ

Փարիզի Աղդային պաշտպանու-
թեան կառավարութիւնը դեկտ. 2 թը-
ւով հետեւեալ նամակն ուղղեց թրջիւ
զիւ զօրապետին:

« Զօրապետ եւ սերելի նախագահ.

« Երեք օրէ ի վեր սրտով ձեր
հետ ենք այդ փառաւոր պատերազ-
մի դաշտին վրայ, ուր հայրենեաց
բաղքը կը վճուուի կողմէնք ձեր վը-
տանդներուն բաժանորդ ըլլալ եւ մեր
քաջամարտիկ բանակին յաջողութիւնը
ձեր աջին անձնութեամբ համար պատ-
րաստելու եւ ապահովելու փառքը
որ իրաւամբ ձեզ կը վերաբերի, ձեզ
թողուլ: Ոչ ոք ձեզնէ աւելի իրա-
ւունք ունի պանծալու: Ոչ ոք աւելի
արժանաւորութեամբ կրնայ անոր վրայ
բայ գովեստ խօսել Գլխ. Սպայակոյտի
միայն կը մտնաք, բայց չէք կրնաք

ձեր օրինակաւ եւ քաղաքաւ ձեր զին-
ւորակցաց եւ անդադրելու կեցողեան
ինքնազոհ ծածկել : Գաղթը էր մեզ
ձայնակցել անոնց : Ներքեք մեզ գոնէ
մեր սրտին մէջ լցուած բոլոր շնոր-
հակալիքն ու սէրը ձեզ յայտնել : Եւ
սէք քաջարի Տէրքը զօրապետին ,
ձեր անձնուէր սպայից , եւ արիա-
գունդ զօրականաց , թէ մեզ կ'ըմայ-
լինք իրենց վրայ : Հասարակացեալ-
կան Գաղթիւ իրենց վրայ կը տեսնե-
ալն աղիւս եւ անարտա Գաղթիւնու-
թիւնը որ արդէն զինքը իրկած է :
Գիտէ հիմա թէ կրնայ իր իրկութեան
յոյսն անոնց եւ ձեր վրայ գնել :
Մեք, ձեր քաջաւորակիցքը , ձեր խոր-
հրդոց ծանօթ , ուրախութեամբ
կողմնակնք այս գեղեցիկ եւ մեծ օ-
րերը , ուր ինքնինքնիդ ամբողջա-
պէս յայտնեցիք , եւ որք , ինչպէս
որ քաջ համարուած ենք , մեր ազա-
տութեան սկզբնաւորութիւնն են : »

« Ընդունեցէք եւ այլն : »
Տէրքը զօրապետն ալ գեկտ . ձին
հետեւեալ յայտարարութիւնն ուղ-
ղեց իր զօրաց :
« Զօրականք .

« Երկօրեայ փառաւոր կռիւներէ
ետեւ . նորէն ձեզ Մարն գետէն աս-
դին անցուցի , վասն զի համարուած
էի որ նոր ճիգերն ամուլ պիտի ըլլա-
յին դէպ ալն կողմն , ուր թշնամին
ժամանակ ունեցեր էր իր զօրութիւն-
ները դուռնարելու եւ իր գործողու-
թեան միջոցները պատրաստելու : »

« Այն ճամբուն մէջ յամառելով
անօդուտ տեղը հաղթաւոր քաջեր
պիտի զոհէի , եւ փոխանակ ազատու-
թեան դործին ծառայելու , ծանր
վտանգի մէջ պիտի ձգէի . մինչեւ
անգամ անդամանելի աղետի մը կըր-
նայի առաջնորդել ձեզ : »

« Բայց կուր քեզ Եւրպի-
անաւորքդ գաղթեցէք : » Նորէն
քաջաւոր պիտի սկսէր . Պատրաստ
եղիք . շուտով ամբողջացուցէք ձեր ազ-
մամթերը , պաշարները , եւ մանա-
ւանդ ձեր սիրտն ամբարձէք այն դո-
հողութեանց բարձրութեան , զոր կը-
պահանջէ այս սուրբ դատը , որոյ հա-
մար մեր կեանքը տալու պէտք չէ
վարանելու : »

Հիւսիսային Գերմանիոյ դաշնակ-
ցական խորհուրդը՝ Հարաւային Գեր-
մանիոյ կառավարութեանց հետ խորհր-
դակցութեամբ գեկտ . ցին օրն առա-
ջակցեց Հիւսիսային Գերմանիոյ երես-
փոխանական ժողովին , որ Սահմանադ-
րութեան դրուելու գրուած Գերմանական
Գրականութեան Գիտութիւն , եւ 11 րդ
յոդուածն ալ հետեւեալ կերպիւ
խմբագրուի .

« Գաշնակցական նախադասու-
թիւնն իշխանութիւնն կուտայ Բը-
« րուսիոյ թագաւորին որ կ'ԱՅՍՐ Գեթ-
« ՄԱՆԻՍՏ տնտեսն առնու : »

Այս առաջարկութիւնը եւանդա-
դին ծախսահարութեամբք ընդունուե-
լով հետեւեալ օրը քուէի դրուեցաւ
եւ 6 քուէի դէմ 188 քուէով հաստատ-
ուեցաւ :

Թեոյ հետեւեալ ուղերձն առա-
ջարկուեցաւ իի յօմ թագաւորին զըր-
կուելու համար :

« Վեհափառ Տէր .

« Զեր վեհափառութեան կողմու-
րը , ժողովուրդն իր գլուխներուն շուր-
ջը խմբուած՝ օտար հողի մէջ՝ բռնա-
պէս ի պատերազմ դրողուած հայրե-
նիքը կը պաշտպանէ զիւրազանական
քաջութեամբ :

« Պատերազմը մեծ զոհողութիւն-
ներ կը պահանջէ , բայց այնչափ քա-
ջերու կորստեամբ պատճառած խոր-
տուգը չկրնար խախտել աղքատ հա-
տատ կամբը , որ է զէնքը վար չգը-

նել մինչեւ որ խաղաղութիւնը լաւա-
գոյն կերպիւ երաշխաւորի՝ ապա
հովազոյն սահմանադրութիւններ հաստա-
տելով նախանձուտ դրացւոյ մը նոր
յարձակմանց դէմ :

« Գերմանական բանակներուն ան-
ձուկ եղբայրակցութեամբ ձեր վեհա-
փառութեան հրամանին ներքեւ տա-
րած յաղթութեանց շնորհիւ աղք-
տեւական միութեան մ'առջեւ կը
գտնուի : »

« Հիւսիսային Գերմանիոյ երես-
փոխանական ժողովը՝ Գերմանիոյ իշ-
խանայ հետ համաձայնութեամբ Զեր
վեհափառութեան գլխավոր կազմէ
որ միութեան դործն ի գլուխ հա-
նէք կայսերական թագն ընդունելով
Այդ թագը՝ ձեր վեհափառութեան
գլխին վրայ՝ Գերմանական ազգին նո-
րոգեալ կայսրութեան հզօր , խաղաղ ,
երջանիկ եւ ազատ օրեր պիտի տայ՝ օ-
րէնքով երաշխաւորելու :

« Հայրենիք փառք կուտայ ոչն
փառաւոր բանակին եւ հրամանատա-
րին որոյ գլուխը կեցած՝ Զեր վեհա-
փառութիւնը տակաւին յաղթական
պատերազմի դաշտերուն վրայ կը
գտնուի : Աղքէ երեք չպիտի մոռնայ
իր որդեւոյ անձնութիւնն ու պան-
ծալի գործերը : Իցի՛ւ թէ իր օգոստա-
փառ կայսրը քիչ ժամանակէն խաղա-
ղութիւնն իրեն վերադարձնէ : Միաց-
եալ Գերմանիա ինքզինքը հզօր եւ յաղ-
թող ցուցուց պատերազմի մէջ՝ իր
կայսեր վահանին ներքեւ ալ հզօր եւ
միանգամայն խաղաղապէս պիտի ըլլայ :

Չերու մ'վեհափառութեան
ամենահաւատարմ հպատակը
Երեսփառական Ժողով Հիւսիսային
Գաղթականութեան : »

Վիեննայի Նոյն Բեւ Լեւր ըն-
տդ իրն հետեւեալ յօդը կուտայ :

« Գերմանական իշխանութեանց աշ-
խարհը հասած հեռադարձութիւնը , որ
կը ծանուցանէ թէ Գաղթը որոշու է
հիւսիսային իրաւասութեանց վե-
րաբերեալ դաշնագրութեանց բար-
ձու մը փորձել տեղութեանց հետ բա-
նակցելով , եւ ոչ կորսաբեկաբար վար-
ուելով կամ Լուքսեմբուրգի խնդրոյն
մէջ Պ. Պրիսմարքի ընթացքը բռնելով :

« Եւրոպի թէ Բուսիոյ պիտի պաշտ-
պանէ թուրքիոյ այս առաջարկութիւն-
ներ , կը հասկնանք զայս . վասն զի ա-
ռանց ասոր Բուսիոյ ինչպէս կրնայ
Սեւ ծովու չէզոքութիւնը բաւանդու-
ինքորոյն մէջ Գրան հաւանութիւնը
յուսալ : »

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Բրոսիւն

Պեքլին 23 գեկտ .

Թագաւորն առ թագուհին .

Վերսայլ 22 գեկտ .

Թշնամին հաւանականաբար կար-
ծելով թէ Գաղթից հիւսիսային բա-
նակը փարկէն հեռու չէ , երէկ դուրս
յարձակուած մ'ըրաւ դէպի Սիւէն , զոր
մեր պահապան զօրաց առաջին գուն-
դը նորէն ետ առաւ , եւ Պորտէի
դէմ : Այս երկրորդ կէտին վրայ կը-
ռիւն աւելի մեծ էր թնդանթիւնով
փաղաքը նորէն ետ առնուեցաւ : Գա-
նի մը հարկու ալ դերի առինք : Մեր
կորուստը մեծ չէ :

Համառապէս յարձակումներ եղան
Պոսլինի Սալոնայի դէմ գէպի Սիւ-
րան , եւ Բոնի ու Նեյսիլի առջեւ
Մարնի վրայ գէպի Շէլ բայց ետ քըշ-
ուեցան : Այսօր նոր յարձակում մը
կ'ապրուէ այն կողմէն : Օղը պարզ եւ
ցուրտ է , գիշերները մինչեւ 5 աստի-
ճան ցուրտ ունենք :

Վերսայլն գեկտ . 22 թուով պաշ-
տօնական հեռագիր մ'ալ կըսէ : Գա-
րկուցոյ երէկուան յարձակման մէջ

1000 ողջ դերի բռնեցինք . մեր ճա-
կաններուն դէմ առանց յարձակելու
շարունակ ունենալ տրձակուեցաւ : Մի-
այն հինգերորդ զօրաբանակին վրայ
350 ուսմբ ինկաւ , բայց մէկ զինուոր
մը միայն վերադարձուցաւ :

Գեկտ . 22ին երկու Գաղթական
կիտարովն զօրք Մարնի եղերքէն
Սալոնայի ճակն թեւին վրայ յար-
ձակեցան , բայց վերթեմպէրկուցոյ թըն-
դանթիւններուն կրակովը ետ քշուեցան :

Գաղթական

Պորտո 23 գեկտ .

Օղանաւորներն հետեւեալ հե-

ռագիրը կարկին Պ. Կամպէթիլի :

Պոֆօր , Մէնէլար 22 գեկտ . Գա-
րկէն այս առաւօտ ճանրայ երկրով
մայրաքաղաքը դերազանց վիճակի մէջ
թողուցինք . Զինուորական գործողու-
թիւններն երէկ առաւօտ նորէն սկը-
սան , Գլխաւորապէս թնդանթիւն կը-
ռիւ մ'առնեցանք որ նպատակաւ ե-
ղաւ մեզ : Վիեննա զօրապետը՝ Վիլ-
տ Սլիքէն եւ Մէլզոն՝ Պրանչն առաւ :
Տէրքը զօրապետն ալ Տրանսիլ առ-
ջեւ կուռեցաւ :

Փարիզ 21 գեկտ . Իրիկուն (օգա-
պարկով)

Պաշտօնական տեղեկագիրն հե-
տեւեալ կերպով կը ծանուցանէ այս
աւուր կռիւներուն արդիւնքը :

Մէլ կողմը Գաղթականք Նեյսիլի
վիլլա-Վարար եւ Մէլզոն-Պրանչն դըրա-
ւեցին . թշնամիոյն կրակն ամեն կէ-
տերու վրայ քրտնեցաւ :

Բոնիէր ծովապետին զօրքերը
Պորտէի վրայ յարձակեցան , բայց չը-
կրցին հոն կենալ եւ 100 դերիով ետ
դարձան : Տէրքը զօրապետը երօսէի
եւ Տրանսիլի ազարակը գրաւեց : Մ'օն
վալէրիէնի կողմն ալ Նեյսիլ զօրապետը
կեղծ յարձակում մ'ըրաւ Մ'օնրիւնի
եւ Պորտէի վրայ յարձակեց :

Մեզային պահապան զինուորները
մեծ եռանդ ցոյց տուին թրջիւ զօ-
րապետը գիշերը զօրաց հետ անցուց :

Պորտո 23 գեկտ . Իրիկուն .

Թուրքն գեկտ . 22 թուով պաշտօ-
նական հեռագիր մը կը ծանուցանէ
թէ Բուսիոյցիք քաղաքը չգրաւելով
մեկնեցան գաւառէն եւ Պրա դար-
ձան :

Պորտո 24 գեկտ .

Պաշտօնական տեղեկութիւնները
կը հաւատան թէ Բուսիոյցիք Բուս-
նի կողմերէն քաջուեցան , եւ միայն
1500 Բուսիոյցի մնացած է հոն :
Բուսնի բոլոր մթերանոցները կողոպ-
տուեցան եւ աւարը գէպի Ամիան
դրկուեցաւ :

Թշնամին վերջնական կերպով ետ
կը կենայ Թուրքն անգին քալելէ , եւ
գէպի Օրլէան կը քաշուի : Այս նա-
հանքը կը դուռնակուէ իրերէ հետե-
ւանք Գաղթական բանակին ուրիշ կէ-
տերու վրայ քրտնեցաւ : Պաղտիւնական
շարժմանց :

Ֆետէրալ զօրապետին գեկտ . 23
թուով պաշտօնական հեռագիրն հե-
տեւեալ լուրը կուտայ . « Այսօր ճա-
կատամարտ ի Բոն-Յօսիլ . պատե-
րազմի դաշտը մեր ձեռքը մնաց 7 ժամ
կուռէ ետեւ : »

Փարիզ 22 գեկտ . (օգապարկով)

Այսօր բնաւ կռիւ չեղաւ , բայց
նոր գործողութիւններ խիստ մօտա-
լուտ կերեւին . կատարեալ հանդար-
տութիւն եւ ընդհանուր փառահաւանութիւն :

Լոնտոն 23 գեկտ .

Տեղւոյս լրագիրները կը ծանու-
ցան թէ Բուսիոյցիք ծանուցագիրը
քննելու պաշտօն ունեցող գեղապետա-
ժողովը յուսովարի սկիզբը պիտի դու-
մարի : Գաղթական ներկայացուցիչ պիտի
ըլլայ Պ. Թիէր :

Տէյլե-Թէյլեիւմ լրագիրը առաւ

կը հանէ այն զրոյցը թէ Բուսիոյցի
կարողութիւնը գիտաւորութիւնն ու-
նի Մօրտո-Վալաքիոյ իշխանութիւնը
թուրքիայէն անկախ հրատարակելու
թայմը եւ Մօրիլիկ-Քօսթ կըսեն թէ
կարողութիւնը իշխանութեան վրէժնայի , Լոնտոն-
յի , Պէրլինի , Պօրտոյի եւ Ֆիորենցիոյ
կառավարութեանց , յայտնելով թէ
Բուսիոյցի կայսրութիւնը փարկէի դաշ-
նադրութեան կարգադրած կերպով
անտանիկ է , եւ ասոր վրայ տէրու-
թեանց ուշադրութիւնը կը հրաւիրէ :

Լոնտոն 24 գեկտ .

Բուսիոյցի խնդրոյն վրայ գեղապե-
տաւորութիւնն առաջին գաւառումը յուն-
վար ջին պիտի ըլլայ :

Կը հաւատան թէ Բուսիոյցի հա-
ղար Միլիթայեօզ ազաւորներ է Ամե-
րիկայէն :

Ֆիորենցիա 23 գեկտ .

Խորհրդարանն ընդունեց մայրա-
քաղաքին Հոմ փառադրութեան ա-
ռաջարկութիւնը , որ վեց ամսոյ մէջ
պիտի կատարուի : Ֆիորենցիա քաղա-
քին համար շնորհակալութեան քուէ
առաջարկուելով ընդունուեցաւ :

Ֆիորենցիա 26 գեկտ .

Ամէտե թագաւորը (Սօթի դուռ-
քը) Մեթէֆիա դնաց , անկէց Սպանիա
երթալու համար :

Մ'օն-Քէնիա լեւը ծակելու գործն
երէկ իրիկուն աւարտեցաւ մեծ ցըն-
ծութեամբ :

Խորհրդարանը մինչեւ յունվար 16
դադրեցուց նիստերը :

Բրոսիւն

Վերսայլ 20 պեկտ .

Պաշտօնական՝ Մեր բանակին ձախ
թեւն այսօր ընթացքը շարունակեց
դէպ ի Թուր , ալ թեւն ալ դէպ ի
Մանտ իրենց Թուր երթալու ճան-
քուն վրայ 6000 էն առելի վերադար-
եալ Գաղթականք իր զորքերէն , զորս
Գաղթականք բանակը թողուցեր էր ա-
ռանց որ եւ է ինամոյ , Համի կողմէն
յառաջ քաղող մեր գունդերը կըս-
տուգեն որ Գաղթականք բոլորովին ետ
քաշուած են այն կողմերէն :

Նիւիլ մօտ 20000 էն առելի Գաղ-
թականք , Գրոմէր զօրապետին հրա-
մանատարութեամբ 18 ին յաղթուե-
ցան 5 ժամկուռէ ետեւ : Մեր կորուս-
տն է 1800 ի չափ մեռեալ ու վիրա-
ւոր , իսկ թշնամեաց կորուստը 1000 էն
առելի մեռեալ ու վիրաւոր եւ 700
գերի :

Պաշտօնական՝ 19 րդ զօրապետի-
նը 21 ին յառաջացաւ մինչեւ Թուրի
կամարը , եւ հոն ժողովուրդեան կող-
մէն ընդգլխութիւն տեսնելով 30 պայ-
թուցիկ ուսմբ նետեց քաղաքին մէջ :
Այն ժամանակ քաղաքն սպիտակ
դրօշ պարկելով Բուսիոյցի պահապան
զօրք խնդրեց , բայց զօրապետին իր
ստացած հրահանգին համեմատ մի մի-
այն երկաթուղին քանդեց , եւ իրեն
ցոյց տրուած տեղը գնաց բանակեցաւ :

Ամիան 24 գեկտ .

Երէկ մեր առաջին զօրաբանակն
յայտնող ճակատամարտ մը տուաւ Հա-
լիկ մօտ՝ Ամիանի հիւսիսային քաղա-
մրտեան կողմը՝ Գաղթականք հիւսիսա-
յին բանակին դէմ որ 60000 հողի էր :
Բանի մը դեղեր առնելու ետեւ՝ թըշ-
նամին մեծ կորուստներով Հոլիէն ան-
գլին նետեցինք : Մինչեւ հիմա 1000
ողջ գերի բռնեցինք :

Գաղթական

Մարսիլիա 25 գեկտ .

Գեկտ . 20ին գէշերը Պէրիօրի պա-
հապան զօրք Բուսիոյցի պաշտա-
բեր յարձակում մ'ըրաւ , եւ անոնցմէ
չատ մարդ վիրաւորեց եւ թնդանթի-
ւներ դատեց :

Ֆետէրալ զօրապետը 23ին երկար

Կուրս մ'ընթաց Բոն-Նոյեմբեր (Ամսաթիվը նախանշված է) և հետևաբար կորցրած ընդհանուր յարձակումով մեր թշնամին ետ մղելով պատերազմի դաշտին տեղ մնաց:

Գաղութները բազմաթիվ թվերով եւ պաշար առին:

Մասնաւոր բայց հաւատարմագրութեւն եկած հետագայ մ'ալ կրէ թէ ֆէտէրալ զօրապետը յարմար առնելու մը միջոցով 4000 Բրուսիացի շարքեր է:

Հայր 25 դեկտ.

Նոյեմբեր հազար Բրուսիացիք իսկ Թոնի դաշտը այսօր 5000 Գաղութական զօրազուգի մը վրայ յարձակեցան, բայց ջ ժամ կուտելէ ետեւ ետ քշուեցան 200 մարդ եւ մէկ դամուած թնդանով կործանեցաւ Մեր կորուստը հարկեր չափ մարդ է:

Սեպտեմբեր 25 դեկտ.

Բրուսիացիք դէպ 'ի փարիզ շարժումն յայտնի կըլլայ: Նոյեմբեր-Թոնի թշնամին մեկնեցան:

Բաթմի 23 դեկտ.

Քանի հազար Բրուսիացիք այսօր Օրլէան հասան, ուր բազում յարկաւորութիւնք կը գործուն մանն օր: Աւարտութեան օրինակը պաշտօնակալը կուտան: Թշնամին իշխեցին եւ Պուր-Թէրուրը պարսկի:

Ձեռնդրութիւն

Պալ 24 դեկտ.

Ալլախի Ժողովրդեան հողին զարմանալի հայրենասիրութեամբ վառուած է, եւ առիթ կը վնասէ յայտնուելու: Բրուսիացի դէմ առնուելունը կատարելալ:

Ֆերմանական զօրաց մէջ բարուց ապրակներ թնդան մեծցած է. ծանր զօրութիւններ եւ յաճախ կռիւներ կըլլան ամեն օր Պատենի, եւ վերջէմ պերկի զօրաց եւ Բրուսիացիք մէջ:

Լոնդոն 23 դեկտ.

Անգլ. Բոն. 91/1
Օսմ. Բոն. բաց. 44/1-44/1
» » գոց. 44/1
» Նոր փոխ. 50/1-50/1
» Պանքա 42
Բանթ Խոտայ. 35/1-
Վաղը ամս է:

Վիեննա 24 դեկտ.

Աժիո Վիեննայի 422.50

Լիւքսեմբուրգ 27 դեկտեմբեր

Բաժնակ. Մ. Ն. 0. 8/1
Գախուած 40000 հակ.

43 դեկտ. երեքշաբթի իրիկուն	43	36
46 » չորեքշաբթի առաւօտ	48	38
բացուեցաւ	48	
կէս օր	48	26

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երեկ՝ Աւստրիացի, Հիւսիսային Գերմանիոյ, Յունաստանի եւ Գաղթիոյ դեռ պայմանները Միտ ի պարբերական ապարանքն երթալով առանձնապար տեսակցեցան Նորին բարձրութեան հետ:

Շաբաթ առաւօտ Պայրամի հանդիսին առթիւ արքունի զօրականներ մովուններով ծովուն վրայ սպասած ժամանակին, հարաւային հովին բռնաթիւնէն Մովուններուն մէկը տակն 'ի վրայ ըլլալով՝ զօրականները ծովը թափեցան, եւ կրտսի թէ մէկ քանին դժբաղդաբար խղճուեր են:

Օգոստոսիաւ Մայր Թագուհին աւանակու ընդատուի մը շնորհեց էնքանքան Սիմոն էֆենտին:

ԱԶԳԱՅԻՆ

Ընդհանուր Ժողովոյ դաւաճական յանձնաժողովը երկուշաբթի օրը Ղալաթիոյ խորհրդարանը գումարուեցաւ տանէն ինն անդամոց ներկայութեամբ եւ իր դիւանը կազմեց Ատենապետ ընտրելով Գեր. Ներսէս եպիսկոպոսն եւ Ստեփաննոս Ստեփանէֆէնտի ֆախաբանս:

Յետոյ իր պաշտօնն ըստ արժանւոյն կատարելու միջոցներուն վրայ խորհելով, որչափ նախ Պատրիարքարանի դիւանական արձանագրութիւններէն, ֆախաբան Ժողովոյ առնալով լուծիւններէն եւ դաւաճներէն հան եկած հին ու նոր վաւերական դրուելուն ներքէն վիճակաւ մը հանել տեսնելու համար թէ Թանգիմարի հաստատութիւնէն 'ի վեր ո՞ր դաւաճներէն եկած գանդամներն աւելի են, թէ զըլխաւորապէս ի՞նչ են գանդատանաց 'իւթիւնն ու պատճառները, եւ թէ ի՞նչ դարման տարուած են անոնց:

Այս վիճակացոյցը շինելու պաշտօնը յանձնաժողովն առնալով ֆախաբան Ստեփանէֆէնտի եւ Պատրիարքական դիւանի տաճկերէն զրադիկ կարապետ էֆենտի յանձնուեցաւ, որպէս զի հնար եղածին չափ շուտով կատարեն ու յանձնաժողովին ներկայացնեն:

Այսպէս յանձնաժողովը դիւրութիւն կունենայ իր քննութիւնները վաւերական աղբիւրներէ հանուած ստոյգ տեղեկութեանց վրայ հիմնելու, եւ գանդատանաց ներքին ու արտաքին պատճառները որոշակի տեսնելով՝ իւրաքանչիւրը զոտ զատ նշանակելու եւ պէտք եղած դարմանի միջոցներն ուր որ անկէ առաջարկելու:

Եր յուսանք որ յանձնաժողովը իր պաշտօնն արժանապէս կատարելով՝ թէ աղբիւն եւ թէ տեղութեան կարեւոր ծառայութիւն մը մատուցած կըլլայ. վնաս զի տարակոյս չկայ թէ կայսերական կառավարութիւնը մեղքնէ աւելի փախաբուք է գանդատի պատճառներուն ժամ յառաջ եւ իսպառ բարձմանը:

Ալլախ Մաթիս

Յիշատակաց արժանի Նալբանդեանց իրաւամբ կրկնած ու երեքնամէր թէ քիչքիչ ենք պահանջում մեր աղբիւն համար ոտից ցգլուխն:

Նոյնը կը կրկնեն եւ այսօր ամեն անոնք, որք ուսած են եւ համադրուած թէ աղբիւն իր այս ամառ եւ հարաւորական ընթացքով չէ կազմել երեք 'ի յառաջդիմութիւն մղել. այս է՝ ըսենք, զի մեր փառան ու համարումն ունինք, եւ ինչո՞ւ երկարենք, միթէ մեր աղբիւն մէջ զեղծմանց պահատութիւն կայ:

Ձեզմումը զեղծում կը ծնի, դու աշխատէ օրինադրել ու բարեկարգել եւ ահա զեղծմանը կը յաջորդեն զեղծմանց:

Այս ֆիաստերը դրութիւնը մեր ընթացից մէջ իբր օրինական ուղղութիւն ներմուծուած է. եւ ինչո՞ւ. վնասը զի կամքը դեռ եւս իբր օրէնք կ'իշխէ մեր մէջ եւ ոչ օրէնքը կը թագաւորէ մեր վրայ:

Այս հակառակին ընթացքին անմիջական հետեւութիւնն եղած է աղբիւն օրինաւոր իշխանութեան ըրած օգտակար որոշմանց անդործադրելի մնալը:

Մենք կը դանդաղենք այս կամ այն պաշտօնէին եւ կամ վարչութեան գէժմ, եւ ընդ միշտ գմէք 'ի չքմեղս կը հանենք:

Եթէ մենք իբրեւ Ժողովուրդ մեր օրինացն հնազանդելու բարոյական առաքնութիւնն ունենանք, անդադարձաբար իրաւունք կունենանք մեր

այս կամ այն պաշտօնէին դէմ գանդատելու:

Օրինակաւ մը բացատրենք մեր այս ըսածը:

Արդեանք Արդ. Իրթութեան խորհուրդը հարստանաց կամ ննջեցեալի գաղթական տղայք երթալն կարի իրաւամբ արդիւն ուղեղ Երթուտ աղբիւն մանկուոյն, բայց հանապազօրեայ վարձերը ցոյց կուտան որ յիշեալ պատուարժան խորհրդի ըրած նոյն օգտակար որոշումը անդործադրելի թողուած է նոյն իսկ Ժողովրդեան ձեռամբ:

Գնու երէկ Ղալաթիոյ Ամենափրկչի վարժարանը կը գտնուէինք, մէկ քանիներ եկան ննջեցեալի տղայ ուղեղու. վարժարանին արդայ տեսութիւնը ոչ միայն կը դժկամակէր, այլ եւ շատ իրաւացի փաստելով կուզէր զանոնք համոզել, բայց անկարելի եղաւ, եւ ցաւ 'ի սիրտ կ'ըսենք որ աշակերտք իրենց առօրին դասերէն դիւրեւելով որովք իրենց աղաքան պիտի պատուատեն, մեռելաթաղի նման ելան դաշին:

Նոյնպէս կը պատմեն թէ ֆարաքէօմիւրի երկուս վարժարանաց աշխիտ տեսչութիւնը մեռելն եւ հարստանաց տղայ երթալու բացարձակ արգելք դրած է. բայց նոյն տեղայն երկայնահասակ եւ տեղափոխ քահանայ մը (կը խնայենք այս անգամ յանուանէ յիշելու), հակառակ յիշեալ պատուելին, քանի մը տղայք հարստանաց կը տանի:

Այս տեսակ զեղծմաններն, ազնիւ Մաթիս, աղաքայ Ղալաթիոյն առաւել ֆիաստակար ըլլալով, կը ցաւենք որ մեր մէջ դեռ կը պահուին:

Այնպէս թեմա հանդերձ այն կարեւոր խնդրոյն վրայ մեր ուսումնասիր Մ. Հայրեկի ուշադրութիւնը հրաւիրելով՝ կարգաչենք զինքը որ հանի ընդհանուր կոնդակաւ մը բացարձակապէս արգելու յիշեալ ֆիաստաբեր սովորութիւնները:

ՍԻՍԱԿ

Անգլ. Մեքսիկո-Ինչ

Հ. Խղիտէ անուն կաթիլի վարդապետ մ'անցեալ ուրբաթ օրը Մամուլիոյ կաթիլիցալ երեքեցին ըստ Հրուսէական ծիսի պատրաստը ընելով եւ երախայ մը մկրտելով, եկեղեցին պղծուել է: Երթալու վարդապետը հակահաստաններն է եղեր, Հիմա եկեղեցին գոց է իբրեւ պղծուել. Մամուլիոյ Հաստանան կղերն ու Ժողովուրդը հոն չեն երթար եւ տան մը մէջ ժամերգութիւն եւ պատարագ կրնեն եղեր:

Այս տեսակ սրբապղծութիւն մը մնչուեւ այսօր լուծած ու տեսնուած չըլլալուն համար է որ անգլ. մակդիրը կուտանք:

Երուսաղէմի մէջ ամեն օր Լատինք կրթական պատգամներ Յունաց եւ Հայոց պատարագած սեղաններուն վրայ պատարագ կընեն, եւ խղճներուն չգալի, իսկ Հաստանանք չընդունող կաթիլի քահանայի մը պատարագած սեղանը պղծուել կը համարուի:

Բայց դարմանալու չէ:

Մաթեանդութիւնն ու հակառակութիւնն այսպիսի աղտոտաց եւ հակառակական տեսարաններ կրնան ընծայել աշխարհի:

Տեսնենք ի՞նչպէս պիտի նորէն սրբադործի պղծուել եկեղեցին:

Այս ալ փչէ հետաքրքրաշարժ չէ:

Ալլախ Մաթիս.

«Գիտէք որ գաւառներն յայցելութիւն ելած են, եւ այս անգամ պաշտօնով ելած ըլլալու շատ բան խիստ մօտէնքներն եւ գանդատանաց առիթ եղող պարագաներն ունանց վերայք լաւ անդեկութիւն ստացայ, զոր պիտի փութամ հետզհետեւ ազատաբոյր լրագրոյդ. միջոցաւ 'ի լոյս անել:

«Գիտեցատանոց առիթ եղող խնդրոց առաջինը դաւաճաց առաջնորդութիւնն է:

Այս խնդիրը 'ի հետեւ աղիտացնելուն համար պարզ եւ հուսալից աշխարհութեան արժանի է, բայց մեղ համար այնպէս չէ. Այս խնդիրը մեր դաւաճացի եղբայր համար մահու եւ կենաց խնդիր մ'է, ուստի եւ մեծ նկատողութեան արժանի, վնաս զի առաջնորդ մը իւր վիճակին մէջ տակ կըբռնական դուր մը չէ, այլ ամենայն ինչ է:

Ուստի մենք մեր գիտողութիւններն նախ այս կէտէն կ'աշխտենք. Նոյնութեան առնելով զալ անդամ 'ի խորհրդի առաջնորդական վիճակը:

Կ. Պոլիս

ՍԻՍԱԿ

15 դեկտ. 1870

1870 դեկտ. 5 Թրիպոլի

Խմբագիր տէր:

Թրիպոլիի ազնիւ եւ ուսումնասիր աղագանց այսքան ժամանակէ 'ի վեր ամառ ցոյց տուած դովելի մարդասիրութիւնն եւ ջերմ համակրութիւնն չարժեալ, ուր որ մերձ երեք տարուց դասատուութեան փոխուել պաշտօնը վարելու բաղքն ունեցած եմ, եւ կը շարունակեմ առեալն, որոց իմ խոր շնորհակալութիւնս հրապարակաւ յայտնել արդէն պարտաւորուած ըլլալովս, ներկայիս կը փութամ իմ այս նուիրական պարտականութիւնս կատարել:

Ուստի յաւատով որ դուք եւս մեր այս ջնջին երկաղիկը չէք զլանար աղաքարաբար ձեր աղագոյս լրագրոյն փանկիւնը դեռեղելու շնորք ընելէ:

Նախ շնորհակալ եմ այն ազնիւ եւ զգայուն անձերէն, որոնք ընդ միշտ մեր տկարութեանը քաջաբար հանդիմանելով խրախուսեցին զմեզ, իտե՞նք թեմա եւ գովելի համբերատարութեամբ յաղթել այն ամեն գժուարութեանց, յոյ՞նդոսներու եւ վիշաբու... եւ անձանքովք ջան 'ի կուրծ աշխատիլ 'ի սէր եւ 'ի յառաջդիմութիւնն ուսումնասիրաւ թշուառ մանկանաց որք սուղ ժամանակի մէջ ուսման ճաշակն առնելով ըստ բուականի յառաջացած են, որոցմէ նաեւ բաւական աշակերտք չափաւոր ուսմունք առած հրամաճա տուած են զպրոգէս եւ այժմ առեւտրական գործոց կը պարտալին:

Մեծապէս շնորհակալ եմ Ղըճճեան ազնիւ գերգաստանի զուրն մեծապատիւ Մ. Խաչիկ եւ Մ. Թալոր տղաներէն, որք 'ի սկզբանէ անոնի գաղթական անկախան յարաւերութեան եւ զօրեղանքն առաջին աշխատանքներն եղած են եւ են, սիրող ուսման ու նաեւ աղագային յառաջդիմութեան, նմանապէս մեծապատիւ Ղըճճեան Մ. Մարգար, Աղագայեան Պաղատաբեան Միլլոն, Միլլոնեան Գրիգոր, եւ աւանց նման աղագայն ու զպրոգէսը աղանիւ աղաներէն շնորհակալութիւն մեծ ունիմ, բայց 'ի քանի մը գովողի եւ ուսման հակառակող անձերէ, որք իրենց բաղձած ժամանակնայ նիւթած մեղմայութեամբ մօտեցա փորձ մը ըրին զպրոգէս խառնաբերու, բայց բարեազդարար չյաջողեցան իրենց տրամադրած վատ նպատակին հասնիլ:

Յիշեալ աղագայն անձանց ուշիմութիւնը ու աշխատելիւնը թոյլ եւ տեղի չ'ուտին, որ կարենային իրենց գեր խառնալ: Ապրիլն անոնք, որ ուսման եւ դաստիարակութեան յարգը ճանչելով մեծ կարեւորութիւն տեսած են, յօգուտ իրենց օրագոց եւ աղբիւն:

Վասն որոց կը գովենք յիշեալ ուսումնասիր եւ ազնիւ աղաներուն գովելի եւ ուսման ու տարած աշխատութիւնները որոց յառաջդիմութեան նկատմամբ, որք նաեւ աշխարհը զոհողութիւններն եւս երբեք չեն զլանար. զայս ընելովն իրենց օրագոց ստաղակն կերպարաններն անշուշտ, եւ Ժողովրդեան ողջամիտ մօտը որք ուսման ու դաստիարակութեան օգուտները լաւ հասկըցած են, միայն իրենց դաւաճանքը կը խրախուսեն 'ի նոսին յառաջդիմելու բաղձաւոր. ուրիմն կը քաջաբարնք Թրիպոլիի ողջամիտ հասարակութիւնը յառաջդիմելով որ այս գովելի բաղձանքն ու յոյսը ապագային մէջ Առաւելով պիտի պատուի:

Հուսկ ուրեմն, խմբագիր տէր, իմ ջերմ շնորհակալիքս նուիրելով ձեզ եւ յիշեալ ազնիւ անձանց:

Մնամ

Գրատառու Լ. Վարժարանի Գանել Գ. Մեքսիկո-Ինչ

Ա.Ջ.Դ.

Խաչակրաց արշաւանքը՝ Արեւելեան պատերազմաց մէջ ամենէն երկարատեւն ու հաշակաւորն հանգիստացած է. վասնորոյ Հայոց հետաքրքրութեանարժանի նիւթ մը կը համարվի անոր վերաբերեալ նկարագրութիւնն ալ՝ զոր վիպասանօրէն կը ներկայացնէ մեզ՝ երեւելի Տիկին Գօթի թենէն:

Այս ընտիր (երկհատոր՝ այսինքն 800 էջէ բաղկացեալ) գործոյն տըպագրական ծախքը փոքր ինչ թեթեւեղեալ նպատակաւ բաժանորդագրութիւնն մը բացինք, մէկ մէծիտ գին նշանակելով ամբողջ գործոյն համար, փոխանակ մէկ ու կէս մէծիտի, որ անգրեզ գինն պիտի ըլլայ յետոյ:

Ստորագրութեան տեղիքն են ձ. Արամեան Յակոբեան խան, թիւ 10, 11, 12, 15. Գաղափեան Գրատուն Չաքմաքճըլար, թիւ 16:

Ա.Ջ.Դ.

Կը ծանուցուն թէ Գաղամիւսն Պ. Արամեանի հեղինակութիւնը չէ, այլ միայն տպագրութիւնն անորն է:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԱՐԱՄԵԱՆ
ՄԵՆՈՒ ՏԵՐԵՑՈՅՑ
ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
1874

ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ
Ամեն Հայ գրաւաճառաց քով կը գտնուի գին 2 ղշ:

ԱՐԱՄԵԱՆ
ՏԵՐԵՑՈՅՑ ՓՈՒՐ
1874

Նոյնպէս ամեն Հայ գրաւաճառաց քով կը գտնուի, գին 50 փարայ:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՊԵՏԵՐԸՈՍԻՆ
Ի ՄԵԶ

ԳԱՂԱՌՈՅ ԵՒ ԲՐՈՒՄԻՈՅ

Տետր առ տետր հրատարակուիլ սկսած է վեհեռակոյ Միլիթարեանց վանքէն, եւ չարթէ չարթ Կ. Պօլիս հասնելով կը ծախուի հայ գրաւաճառաց խանութները. Գին ամեն մէկ տետրակին 60 փարայ:

Հարկ չէ ըսել թէ այս պատմութեամբ ազգայինը կարող կըլլան ճիշդ:

գաղափար մը ստանալ ներկայ պատերազմին ամեն անցքերն վրայ:

ՈՒՍՈՒՄՆ ՊԱՏՏՈՒՆ

Պ. ՇԱՆՇԵԱՆՅԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՈՒ ՔՐԻՍՏՈՍԻՆ

Մտքուր թղթի վրայ նորաձոյլ եւ վայելուչ տառերով տպուած: Պարունակութիւնն է՝ Բրիտանական եւ բարոյական պարտաւորութիւնը մարդոյ առ Աստուած առ մարդիկ եւ առ անձն, ուր է ուսումնի բովանդակ բարոյականութեան: Իւրաքանչիւր օրինակին գինն է կէս Արծ. մէծիտ. իսկ գաղափաց համար զատ օրինակ գնողներուն՝ տասն հատին վրայ մի հատ աւելի ու ճրկագար:

Յանկայողք կրնան ստանալ երկուսով մասունքէն:

ՀՐԱՐՈՒՂԻ

ԵՐԱՐԸՊԸՑ

ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՄԵՐՈՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՊԵՏԱՐԱՌՈՂ ԹԵՆԵՄԵԱՅ

ԵՒ

ԼՈՒԾՈՒՄՆ ԽԴԴՐՈՅ ՀՈՌԱՄԵԱՅԱՆ ԴՐՈՒԹԵԱՆՅ Ի ՎԵՐԱՅՈՒԹԻՒՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱՌԱՂԻՒՄՈՒ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՅ

Թարեւ Միւրաք Տ. Աստուածաբան Միւրաքեան

Յօդուղի Հաւատացելոց եւ ի պարծանս Հայաստանեայցի տաղաւար Ս. Եկեղեցւոյ

Այս գործին մէջ՝ հեղինակն ընդհանուր Եկեղեցւոյ եւ Հայաստանեայց նախնի Ս. հայր զօրաւոր վկայութիւններով կը հերքէ Պապին եկեղեցւոյ գրեթէ ըլլալու անհիմն պահանջումը, եւ այս անտեղութեան մեր ազգին մէջ պաշտպան կանգնողներուն մոլորամիտ առարկութիւնները:

Երեք մասի բաժնուած է բոլոր գործը, եւ արդէն առաջին եւ երկրորդ մասերը տպուած՝ կը ծախուին գրաւաճառաց քով. գին 6ական ղշ:

ԳՐԱՐԱՅԻՆ
ՔՐԻՍՏՈՍԻՆ
ՀԱՅԱԿԱՆ ԼԵՁՈՒԻ
ՅՈՐԻՆԵԱՆ

Ա. Մ. Վ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆԵ

Մինչեւ հիմա հրատարակուած քերականութիւններէն տարբեր ոճով եւ տարբեր ընթացքով քերականութիւն մ'է, գործնական հրահանգներու վրայ հիմնեալ որով ուսանողք փոխանակ իր չհասկցած բաները թուծակօրէն

գոյ ընելու առաջին օրէն ի գործնական կը թուծակօրէն սովորանքներուն գործածութիւնը կը սովորի:

Աւելորդ է ըսել թէ Պ. Ա. Մ. Վ. Գարաղաշեանի հմուտ գրչէն ելած այսպիսի քերականութիւն մը՝ իր սահմանին մէջ՝ կատարելութեան երաշխաւորութիւնն իր հետ ունի:

Կը ծախուի Պ. Յ. Գալափեանի զըրատունը, ի Չաքմաքճըլար փողոց, ին 2 փրանք:

ՏԵՐԵՐ

ԳԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՐԵՄՈՒԹԵԱՆ

ԹԱՐԴԳՄԱՆԵԱՆ Ի ՖԵՐԱՆՏԵՆԵ

Հ. ՓԱՌԱՅԱԿԵԱՆ

ԵՒ

ՀՐԱՏԱՐԱՅ

Ի ՆՊԱՏԱՆ ԱՆՁՆՈՒՄԻ ԸՆԴԵՐՈՒԹԵԱՆ

Գ. Ա. ՉՈՊԱՆ

Պէրլինի քաջհմուտ տնտեսագետ եւ երեւելի վիճակագիր Պ. Ոթօ Հիւսիներ Գերմանացւոյն նախակրթական վարժարանաց համար յօրինած ընտիր գաղափարն է որ Եւրոպայի վարժարանաց շատերուն մէջ ընդունելութիւն գտած է՝ իր պարզ եւ գիւրջ բըռնելի ոճին եւ յստակ բացատրութեանց պատճառաւ:

Մեր ազգին մէջ ալ կը յուսանք որ նոյն ընդունելութիւնը կը գտնէ կրկին օգտակար նպատակաւ, այն է, տնտեսական կենցաղագիտ. ծանօթութեանց ծաւալումն եւ Անձնուէր ընկերութեան քաջալըրումը, որովհետեւ այս գրքէն մէկ հատ գնողը հատ մ'ալ Անձնուէր ընկերութեան նուիրած կըլլայ:

Ամեն Հայ գրաւաճառաց քով կը գտնուի: Գին 7 ղուրուշ:

Պ. ՎԵՐԵՂԵԱՆՅԱՆ ՄԱՐՈՒՆ

ՀՈՒՄՈՒՄԻԱՆՔ

ԹԱՐԴԳՄԱՆԵԱՆ

ՏԵԱՌՆ ԵՐՈՒՍԵՐԱՅ ՀԻՐԵՄԻՏ

ՇԻՐԱԿԱՆ ԱՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1870

Հին ժամանակի երկու ամենէն մեծ բանաստեղծներէն մէկուն՝ վերգիկոսի այս անգլագական գործն ալ վերջապէս ընտիր հայերէն լեզուի վերածուած կը տեսնենք՝ Հայոց ամենէն ընտիր եւ միանգամայն բանաստեղծ թարգմանչին՝ Հիւրմուղեան Գեր. Եղ-

ուարդ. Արք. Եպիսկոպոսի Երկաթիւրու թեամբ:

Ամեն Հայ գրաւաճառաց քով կը գտնուի գին 1 ֆր. 25 սանթիմ:

ԵՐԿԱԹԷ ԴԻՄԱԿՈՎ

Մ Ե Ր Դ Ը

ԵՒ

ԱՆԵՏԻՔ ՊԱՏՐԻՐԱՔ ՀԱՅՈՑ

Լրագրոյ մէջ մասն առ մասն հրատարակուած այս հետաքրքրաշարժ գործը զատ տպուած կը ծախուի լրագրոյ գրասենեակը գին 6 ղշ:

ԵՐԿԱԹԷ ԴԻՄԱԿՈՎ

Հայերէն, Գաղղիերէն, Իտալերէն լեզուաց եւ Աշխարհագրութեան ու Թուարանութեան հմուտ Հայ Երիտաւարդ մը կայ՝ այցելութեամբ դատաւորութիւն ընելու պատրաստ, թէ դպրոցներու եւ թէ՛ տուններու մէջ:

Ուղղորդ լրագրոյ խմբագիր-Տնօրէնին հետ պէտք է խօսի:

Այս լրագիրը չափով երկու անգամ կը հրատարակուի, չորեքշաբթի եւ չաբաթ օրերը, Բաժանորդագրութեան անդին են Կ. Պօլիս Զինիլի խանը վերլարիւ թիւ 6 Մասիսի խմբագրատունը:

Իսկ դուռնաց մէջ հետեւեալ հոգաբարձուաց սենեակները:

Ի. ՉՄԻՐ. Ստեփան աղա Տէալեան. ՆԻԿՈՒՄԻՐԻԱ. Թորոս աղա ոսկերիչ. ԱՏԱՐԱՅԱՐ. Յարութիւն աղա Նաղաբէլեան.

ՏՐԱՊԵՏՈՆ. Խաչատուր աղա Էլմասկան ԿԱՐԻՆ. Կարապետ պատուելի Զաքարեան:

ՍԵՐԱՍՏԻԱ. Վարդան Էփէնտի Աբգարեան:

ԵԱՏ. Մ. աղա Խաչիկեան. ՀԱՆԷՊ. Նիկողայոս աղա Տէր Մարգարեան:

ԵՐԶՆԱՅԱՆ. Ընթերցասիրաց Թանգարան. ՎԱՆ. Գրիգոր աղա Խաչանեան:

Ուրիշ քաղաքներէ ստորագրելի ուղղներն այս անգորէն մէկուն հետ կրնան թղթակցել:

Խմբագիր—Տնօրէն

Կ. Ս. ԻՆՔԻՆԻՏԻԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՐՈՒՆ ԼԵՁՈՒՄՈՅ

Կ. ՊՈԼԻՍ ԶԻՆԻԼԻ ԽԱՆ

Ա.ՈՒՆԻՏՐԱԿԱՆ

ԸՆԹԱՅՔ ՓՈՒՄՆԱԿՈՒԹԵԱՆ
16 ԴԵԿՏԵՄԲԵՐ

(ՕՍՄԱՆԵԱՆ ԼԻՐԱՅԻ ՀԵՏ 100 ՂՈՒՐՈՒԵՑՆ)

Հոնորա 3 ամիս զուրուշ 110
Մարտիկա » —

ԸՆԹԱՅՔ ԴՐԱՄՈՅ
16 ԴԵԿՏԵՄԲԵՐ

Անգղ. վրա զուրուշ 110,18
Նաբոյէն ոսկի » 88,20
Իմբէրիալ ոսկի » 89,10
Քըրքից » 84,24
Հինգ ֆրանք » —
Հինգսոց » 405,
Պղինձ » 113,10

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹԻՒՆ 16 ԴԵԿՏԵՄԲԵՐ
Ա Ր Մ Տ Ի Ք

Յօրեն կարծր Պէտարապիա 30 — 32
» » Աղագ 31 — 33
» » Պալլըք 29 — 31
» » Պուրկաղ 29 — 31
» » Թէքիւրաղ 29 — 31
» » կակուղ Աղագ 31 — 32
» » Պէտարապիա 31 — 32
» » կարքա թունա 31 — 32
Յօրեն կակուղ Պուրկաղ 24 — 29

» » Վառնա 24—29
» » Պալլըք 24 — 29
Եղիպտացորենի թունա » —
» » Անատոլ. 17 — 18
Գարի թունա » —
» » Անատոլ. » —

ՆԵՐՔԻՆ ԲԵՐՔ

Ի Ո Ձ Ա Կ Ձ Ո Ր

Պուրա զուրուշ
Անատոլու »
Բօլոս ֆրանք ոչ գին կայ
Էսթրէ » եւ ոչ գնող
Մակած »

Բ Ա Մ Պ Ա Կ

Կէյլէ հօխա 40 —
Իզմիր » 40 —
Ատանա » 9 —
Պարսկաստան » 7 1/2 —
Վրաստան » 8 —

Բ Ո Ւ Ր Գ

Անատոլու լուացուած հօխա 8 1/2 — 9
» » Հլուացուած » 5 1/2 — 5 1/2
Բուսէլի լուացուած » 10 —
» » Հլուացուած » 6 1/2 —
Վրաստան լուացուած » —
» » Կէսլուացուած » 14 — 16
» » Հլուացուած » 28 —
Տոպրոնա » 8 —
Էսկէ Շէնի » 5 1/2 —

Մ Ա Ձ Ր
Պարսկաստան հօխա 11 —
Անատոլու » 40 —
ձերմակ » 5 —

Ճ Ե Յ Ր Ի

Գալսերի Ա. տեսակ հօխա 17 1/2 —
» Բ. » » 17 —
Էնկիւրիւ » » 16 —
Թոգաթ » » 13 1/2 — 14
Աքէլէ » » 11 — 13
Եօզդան » » 11 — 14
Զօրուս » » 11 — 12

Թ Ի Յ Թ Ի Ք

Էնկիւրիւ հօխա 36 1/2 — 42
Գաստամպուլ » 36 1/2 — 42
Պէյրաղար » 36 1/2 — 42
Զէրքէշ » 36 1/2 — 42
Վան » 20 —

Ա Յ Ս Ի Մ Ո Ր Ք

Ամասիա 7 — 8 1/2 կտոր մէկ 0. 1.
Եօզդան » » » »
Արփա » » » »
Երզրուս » » » »
Գալսերի » » » »

Ձ Ե Թ

Մուսանիա հօխա 7 1/2 —
» » » 7 —
Արփա » 10 —
Սաքուշ » 7 —
Միւրիս » 7 —

Պղինձ թողաթ երկրին մէջ 9 1/2 — 10
Սալեյ Գասթամպուլ հօխա —
Աֆիօն » 350 — 365
Բիթրէ » 20 — 26
Սուսամ » 3 1/2 — 4 1/2
Կոստան Բնատ. Բիթրէ 26 — 28

» » Բուսէլի » —
Մետաքս Պարսկ. Բէշա » 43 — 44

ԱՐՏԱՔԻՆ ԲԵՐՔ

ԳՈՐԾԱՆ

Խահվէ Բիւս. տեսակ 100 հօխ. 980 — 1100
» » Բ. » » —
Էնկէն » 48 —
Շաքար փոշի Անգղ. Կոյ. 320 —
» » Գաղղ. » —
» » Պուրկ. » —
Չայ Բոնիօ հօխան 22 —
» Բէքօ ծաղիկ » 65 — 95
Անագ դալայ Կինգ. 980 լիթ. »
Պղպեղ (պղպեղ) հօխա 7 1/2 —
Էնկիւրի չիլի ա Պէյրաղար » 130 — 140
» » Մատուս » 140 — 160
Զինք տախտ. 100 հօխա ֆր. 102 —
Երկաթ ձողաձեւ 60 —
» » տախտակ 72 —
» » Բուսէլու 70 —
Բարֆիձա 87 —
Բրինձ Խալիլի 100 Բիւր. 38 — 39
Կարագ եղ Ուսէիյոյ գր. 14 1/2 —
Խալիւար » 26 —